




Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԷԱՑԱՌԱԿԱՆԱՑ



ԳՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




ՔՅԻ 5



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ





ԵՐԱՆԵԼԻ ԲԱՐԶՐԱԳՈՅՆ
ԵՐԱՐԻ

18

ՑԱՆԱԿԱՌԱՑՄԵՆԻ ԴՆՈՇՋԱՆԱ



ՑԻՐԱՆԱԶԱՐԱ

ԵՐԱՆԵԼԻ ԲԱՐԶՐԱԳՈՅՆ



1898



ՑԱՆԱԿԱՌԱՑՄԵՆԻ

ԵՐԱՆԵԼԻ ԲԱՐԶՐԱԳՈՅՆ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ ՀԱՆՐԱԿԻԴԱԳՈՒՅԷ HANRAKIDAGUE

ՀԱՐԱԹԱԿԱՆ ՄՈՋԵՇԼՈՒՄ JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

2. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 3 || 18 ՅՈՒՆԻՍԻԱՐ 1903

ԿԻՐԱԿԻԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

« Ծ Ն Ո Ւ Ն Գ »



Իրելի մանուկներ, ազնիւ տղայներ, ձեզի է որ կ'ուզէիմ խօսքերս. ձեր հասցէին է որ կը դրկեմ այս շաբթուան կիրակիի մտածումներս. քանի որ ձեր օրն է այս. Ծնունդի տօնը ձերն է. ձերինն է. ձեր պաշտպան Մանուկին օրն է. ձեզ հասակակից Փրկչին տօնն է այս: Ամէն անգամ որ մտածում մը կ'առնէ զիս թէ՛ Մանուկ Փրկիչը աշխարհէկաւ, սրբագործելու համար մարդուն մեղաւոր հոգին, չեմ գիտեր ի՞նչ խօլ թափ մը կ'առնէ գըրիչս, զայն ճանչցնելու համար ձեզ, ամէն ջանք չի խնայելով ուժգին տենչերուս, իմ ալեծուփ եռանդիս: Գրել ու գրչտել օրն ի բուն, Անոր վրայ, իմ միակ փափաքս է սիրելի մանուկներ եւ այս բաղձանքս գիտեմ որ դուք ալ պիտի ունենաք օր մը, երբ ձեր ծնողացը եւ ուսուցիչներուն կամ տաներեց հայրերուն ջանքովը գրելու հասկնալու ըլլաք: Պիտի ճառէք Անոր վրայ, վրստահ եմ. երբ ըմբռնէք Անոր սուրբ վեհութիւնը, երբ ճանչնաք Անոր Երկնաւոր Վարդապետ մը ըլլալը, կը սիրէք զայն, այնպէս չէ՞: Սիրեցէք ձեր բոլոր եռանդովը, ձեր անձնուէր ծնողքներէն աւելի: Մտածեցէք անոր վրայ. աղօթեցէք անոր. իմ միակ խորհուրդս է այս, զոր կուտամ ձեզի, կը թելադրեմ ու կը խրատեմ ձեզի:

Ահա՛ տեսէք հոն. ա՛խ ո՞րչափ ննուշ պառկուածք մը ունի ան. ի՞նչ երկնային անմեղութիւն մը կ'արտացոլայ իր ճառագայթով աչքերէն. տեսէ՛ք սիրելիներս, թէ ի՞նչ գուրգուրանքի անկեղծ վերաբերում մը ունի ձեզի նկատմամբ եւ տեսէք թէ Ա՛ն

իր պաղ տնակին, իր խոնարհ ու անպատսպար խշտեակին մէջէն ի՛նչ տաք համբոյրներ կը զրկէ ձեզի: Անկասկած, նոյնը պիտի ընէք դուք ալ Անո՛ր, այնպէս չէ՞. բայց մի զարմանաք, մի քաշուիք, գիտցէք թէ, ինչ որ ընէք ձեր եղբայրներուն ու ընկերներուն, նոյնը ըրած պիտի ըլլաք ձեր մանուկ Փրկիչին, ձեր սիրելի Յիսուսին: Սիրեցէք ուրեմն ձեզ հասակակից եղբայրներն, դուրգուրացէք իրարու վրայ եւ հաւաստի եղէք որ, Անո՛ր ըրած էք եւ անկասկած պիտի վարձատրուիք Անկէ՛. թէեւ զան չէք տեսներ, բայց գիտցէք թէ՛ ձեր մօտն է, ձեր մտքին մէջն է, ձեր սրտին մէջն է Ան: Տեսէ՛ք, հեզիկ հրեշտակներն, որոնք, անո՛ր շուրջը պսակ մը հիւսեր են, անոնք ալ ձեզի պէս են սիրելիներս. ա՛խ ի՛նչ անուշ կ'երգեն անոնք. ո՞րքան անմեղ են եւ որչա՞փ մեծ գուրգուրանք ու սէր կը ցուցնեն Մանուկ Յիսուսին նկատմամբ:

Երգեցէք դուք ալ անոնց պէս. եւ եթէ չէք գիտէր երգել, ստիպեցէք ձեր ծնողքները, որպէսզի սորվեցնեն Տէրունական «Հայր-մեր»ը եւ երգել տան հրեշտակներուն սրտայոյզ «Փառք ի բարձունս» տաղերգը: Վազեցէք դուք ալ ձեր հայրերուն հետ դէպ ի եկեղեցի ուր պիտի գանէք սիրելի Յիսուսը ա՛յն դիրքին մէջ զորս պատկերացուցի ձեզ:

Համբոյրներով պատասխանեցէք Անո՛ր. խնդացէք ու խայտացէք եւ աղօթեցէք ու խաչակնքեցէք ձեր մանրիկ թաթիկներովը, Անո՛ր նուիրական մտւորին առջեւ: Եւ այն ատեն պիտի տեսնէք թէ՛, պիտի սիրուիք բոլոր ձեր ծանօթներէն, պիտի զօրանայ ձեր սիրտը, ու պիտի մեծնաք, միշտ պաշտպանուած ու օրհնուած Անկէ՛ զոր իբրեւ ձեր հայրը, եղբայրը, ձեր պաշտպանը եւ վերջապէս իբրեւ ձեր Երկնաւոր Հայրը պիտի դաւանիք:

Ձեր անձը Անո՛ր նուիրեցէք եւ ապահով եղիք թէ, պիտի պաշտպանէ եւ միշտ ձեր հետը պիտի ըլլայ: Անիկա խաղաղութիւնը պիտի բերէ եւ դուք յաւիտեանս օրհնուած պիտի ըլլաք Տիրոջմէն:

Կը շնորհաւորեմ Ձեզի:

ՊԶՏԻԿ ԸՆԹԱՑԱԽԱՐԱՅԸ

Չորս տարի առաջ՝ դեռ մասդաշ մանուկ՝
Այբ բեկ կը հեզեր իմ շեզուն քոքով,
Վարժասան վրայ հոգեակն իմ նունուկ՝
Ներքող կը հիւսեր անճառ եռանդով :

Հազիւ ուր տարուան՝ վարժասուն մտայ,
Ճիշդ կրկինն անոր՝ տարիս է հիմակ .
Կուրծիս վրայ խաչ մը ունիմ արծաթեայ,
Ու սուրբ խոհերով յրդի՝ միտս համակ :

Թեեւ դեռ անփորձ՝ համբակ մը ճղմիմ՝
Բայց կը սիրե գիւ վարպետս իմաստուն .
Ու տունէն՝ երբ ես դպրոց կը թոյնիմ,
Կը գոչեմ խանդոս . — « Ի՛նչ է, իմ աս տուն » :

Լոյսերո՛վ ծիծողուն ու լուսաբարսւ՝
Հիմկուց ապագաս մտիս կը ժպտի՝
Կը պսակե վարդի փնջիկ հոժ ու քաւ՝
Ժիր ուսանողին ճակատ ծաղկատի :

Վաղը՝ երբ ուսմանս ընթացքն աւարտի,
Ըլլամ պիտի ես գիտուն մը պզտիկ,
Հոգի՛ս՝ նորագարբ կոկոն մը վարդի՝
Յոյ՛ք սիրո՛ւ պիտի խառնեա՛յ խառնո՛ւսիկ :

Օրհնեա՛լ միջո՛ս, օրհնեա՛լ փրսն ուսանողին ,
Ան՝ ջահ մ՛ե յոյսի, ջա՛հ երկնանքշոյ .
Կեանքն, անունն անոր քող յար փողփողին՝
Զքնա՛դ տառերով՝ համակ ոսկեճոյ :

Մ. ԹՈՒՐԵԱՆ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՁ

9.—Ի՞նչպէս կը վարժուին համեսութեան

Փոքրիկ աղջիկ, ամէն օր դու քեզ այս ըսէ՝ «Ի՞նչ կ'արժեմ, կատարեալ առաքինի՞ եմ, կատարեալ գիտնակա՞ն եմ, կատարեալ բարի՞ եմ: Արդեօք բոլոր կատարելութիւնները ստացա՞ծ եմ, ալ սորվելու բան չունի՞մ»:

Խիղճդ քեզ պիտի պատասխանէ. «Ոչ, տղայ, դու դեռ կատարեալ չես եւ ասոր համար հպարտանալու բան չունիս: Այլ ընդհակառակը շատ տեսակ պատճառ ունիս համեստ լինելու, որովհետեւ տակաւին շատ պակասութիւններ ունիս եւ դեռ շատ օգտակար բաներ չես գիտեր: Ինչ որ ես, ինչ որ ունիս, բոլորը կը պարտիս ծնողքիդ եւ վարժուհիներուդ: Որչա՞փ մարդիկ կան քեզմէ աւելի խելացի, աւելի մտացի եւ աւելի ուսեալ: Ուրեմն համեստ եղի՛ր, դու քեզմէ կասկածէ, քեզմէ աւելի փորձառու մարդոցմէ աւելի խելացի լինելու կերպարանք մի՛ ունենար: Գու փոքրիկ գիտութիւնդ ի ցոյց մի՛ դնել, մանաւանդ եթէ բարի գործ մ'ընես ուրիշներու մի՛ պատմել:

10. Զիւնը եւ Յօղը

Հնդիկ գրքի մը մէջ սոյն խրատը կար. « Խորհէ քու տանդ առջեւ եղած ձիւնը աւել, փոխանակ դրացիիդ տանիքին վրայի սպիտակ ցօղը դիտելու »:

Գիտէ՞ք, երիտասարդ աղջիկներ, ի՞նչ կը նշանակէ այս խորհրդանշանական առակը: Շատ կըթիչ է, եւ ով որ կը կամի ինքզինքը կատարելագործել, պէտք է միտքը պահէ: Զիւնը որ մեր դուռը լեցուելով կը գոցէ՝ մեր մեծ պակասութիւններն են, գէշ սովորութիւններն են որոնցմէ պէտք է ազատինք: Մեզ կը նեղացնէ, անհանգիստ կ'ընէ, մեզ կ'արգիլէ ուղած կերպովնիս շարժիլ կեանքի մէջ: Պէտք է աւել, հռուն քել, այսինքն մեզի անկէ ազատել:

Սպիտակ ցօղը, որ կը նշմարենք դրացիին տանիքին վրայ, անոր փոքր պակասութիւններն են: Անմիջապէս զայն կը տեսնենք, մերինէն աւելի շուտ, անոր համար զանոնք կը մեղադ-

րենք: Այնպէս ալ կը կարծենք, թէ ընկեր մը ձանձրալի է, գէշ բնաւորութիւն ունի, շատախօս է եւ չենք տեսներ, թէ շատ անգամ մեր շուրջն եղողը կը ձանձրացնենք, թէ մեր բնաւորութիւնը երբէք կատարեալ չէ եւ թէ մենք խօսիլ շատ կը սիրենք:

Սկսինք մեր պակասութիւնները սրբագրել « Աւելով մեր դժբան առջեւ հաւաքուած ձիւնը », յետոյ ուրիշներուն պակասութիւնը դիտենք:

11. Համեստ եղի՛

« Կ'ուզէ՞ք որ ձեզի համար լաւ բաներ ըսեն, դուք մի՛ ըսէք », կը գրէ բարոյախօս մը:

Պարզեւարաշխութենէն ետք, Վարդուհին շատ հպարտ էր իր արժանիքին համեմատ վարձատրուելուն համար. ամէնուն կը պատմէր, թէ ինչո՞ւ համար եւ ի՞նչպէս ստացաւ պարգեւներ: « Ես՝ ամէնէն մտացի աշակերտն եմ, ամէնէն խելացի, իմ դասարանիս մէջ, ամէնէն աշխատասէրը: Այս ըրի, այն ըրի, ու գովեստի արժանացայ »: Ահա ասանկ կրկնելէ չէր դադարէր:

Մէկը, որ անոր ըսածները կը լսէր, ըսաւ, « Իսկ քու դասարանիդ ամէնէն համեստն ո՞վ է »:

Վարդուհին գլուխը կախեց եւ դասը հասկցաւ: Անշուշտ ինքը չէր ամէնէն համեստը, խորհելով նկատեց որ երբ ինք իր գովեստը կ'ընէր, ոչ ոք բառ մը ըսաւ: Ի՞նչ կրնային աւելցնել իր խօսքերուն, ինքնիրեն սահմանած գովեստներուն: Յիշեց նաեւ զինքը մտիկ ընողներուն ժպիտը եւ հասկցաւ որ ինքզինքը գովելով ծիծաղելի եւ անշնորհք կ'երեւէր:

Երբէ՛ք քեզի համար լաւ մի՛ ըսեր. նոյն իսկ երբ ճշմարտութիւնն է յայտնածդ: Այն ատեն է որ պիտի խորհին փոքրիկ արժանիքդ ճանչնալ:

12. Պատուոյ խօսք

Տղաք կան, որ ամէն բանի համար կ'ըսեն. « Պատուոյ խօսքս կուտամ ասոր համար »: Ահա՛ գէշ սովորութիւն մը: Երբ դու բանի մը համար կը հաստատես թէ գիտես կամ կը կարծես թէ ճշմարիտ է, բաւականացիր առաւաւելն ըսել, « Կը հաստատեմ, կ'ստուգեմ », եւ պատուոյ խօսքդ պահէ կարեւոր պարագաներու մէջ միայն տալ:

Գիտե՞ս թէ ինչ է պատիւդ, որ ամէն վայրկեան խաղի կը դնես: Քու պատիւդ, քու առաքինութիւնդ, քու իմաստութիւնդ արժանապատուութիւնդ է. պատուաւոր անունն է որ ծնողքդ

տուած են եւ դու պարտական ես յարգելու: Երբ կ'ըսես « Իմ պատիւս » իբրեւ թէ այս ամէնը կը թուես: Ձեր պատուոյ խօսքը տալ, այսինքն թէ « Կ'երդնում ֆատոր վրայ եւ իբր վկայ կը բերեմ իմ ընտանիքիս առաքինութիւնը »: Կը տեսնէք այս արտայայտութիւնը որչա՛փ լուրջ է: Մի՛ վարժուիր այսպէս ծանրակշիռ բառերով երդնուլ: Բայց գիտցիր խօսք տալ, պատուոյդ վրայ երդուիլ, երբ հարկ լինի կարեւոր ճշմարտութիւն մը հաստատել ընտանիքիդ պատուոյն համար, ուրիշներուն պատուոյն համար կամ քու անձնական պատուոյդ համար:

Տիկին Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

Դրախտը գտնուած. — Աղամին ժառանգորդները. — Գերման գիտնականի մը տեսութիւնը:

Աշխարհի վրայ չկայ պարտէզ մը որուն այնքան ճամբորդութիւն ընել տուած ըլլան մարդիկ, որքան այն հռչակաւոր պարտէզն որ վկայ եղաւ մարդկութեան սկզբնական ձախողութիւններուն: Ամէնէն աւելի տարածուած աւանդութիւնը կ'ըսէ թէ դըրախտն Արեւելքի մէջ էր: Ուրիշ աւանդութիւն մ'ալ Հնդկաստան կը փոխադրէ գայն եւ ուրիշ մ'ալ Թիպէդ: Նոյն իսկ կան մարդիկ որ կը պնդեն թէ դրախտին հետքերը կը գտնուին Սկանտինաւիոյ մէջ: Եւ այս ամէնէն ետքը, մարդիկ տակաւին չեն գիտեր թէ Աղամին խանձարուն աշխարհի ո՛ր մասին վրայ կապուեցաւ: Այս վարանումը փարատելու կամ մանաւանդ... աւելցնելու համար, Գերման գիտնական մը, որ Հայտէլպէրկի համալսարանին մէջ Բրոֆէսոր է, Պերլինի Մարդաբանական ընկերութեան առջեւ կը հաստատէ թէ նախնական մարդը ծնած է ո՛չ թէ Ասիոյ կամ Եւրոպայի, այլ Աւստրալիոյ մէջ: Գերման գիտնականին կարծիքով, մարդն ուրիշ տեղ չէր կրնար ծնունդ առնել, բայց եթէ այնպիսի երկրի մը մէջ ուր գիշակեր անասուններ չը գտնուէին, վասնզի մերկ, անզէն, պաշտպանողական ամէն միջոցներէ զուրկ, հագուելու եւ տաքնալու եղանակներուն անգիտակ, նախնական մարդը պիտի կրնար ապրիլ եւ իր ընտանիքն ապրեցընել միմիայն այնպիսի միջավայրի մը մէջ ուր հանդարտաբարոյ խոտաճարակներ միայն կան: Արդ, աշխարհի վրայ մէկ երկիր միայն կայ որ այս պայմանն ունի, այն է Աւստրալիան, ինչպէս

որ է հիմա, կամ ինչպէս որ կրնար ըլլալ առաջ, աւելի ընդարձակ եւ Մալէղիոյ մէկ մասին, Սուսադրայի, Ճափայի եւ Պօրնէոյի կցուած, Բայց այս երկիրը իր հիւսիսային ծայրին վրայ, մանաւանդ Պօրնէօ կղզիին մէջ կը սնուցանէ անասուն մը, Օրանկ-Ուղանկը, որ գիշակեր չըլլալով հանդերձ, կրնար նախնական մարդուն կեանքը դժուարացնել:

Գերման գիտնականն այս դժուարութիւնն ալ կը հարթէ: Կ'ըսէ թէ առաջին մարդը դէպ հարաւ գնաց եւ ծովն եկաւ Աւստրալիան բաժնեց Պօրնէոյէն, որով վտանգ չմնաց այլ եւս: Երկիրը, վայրի գազաններէ զուրկ, դիւրին որսեր հայթայթեց մարդուն: Այս հաշուով, Աւստրալիոյ սպիտակամորթերն Ադամին յաջորդներն են, որք հաւատարիմ սէր մ'ունեցած են իրենց ծննդավայրին հանդէպ: Թէ որքան իրաւունք ունի գերման Բրօֆէստրը՝ մարդուն օրրանը ըլլալու փառքը պզտիկ երկրի շնորհելու, Պերլինի Մարդաբանական ընկերութեան գիտուն անդամոց կ'իյնայ որոշել: Միայն թէ, շահեկանութենէ զուրկ չէ սա պարագան որ Աւստրալիոյ անպոչ կապիկն ամէնէն աւելի նմանութիւն ունի մարդկային էակին: Այս զուգադիպութիւնն հետաքրքրական է:

Ժ. ՇԻՐԱԿԱՅԻ

ՏՈՒՆԿԵՐ՝ ՈՐՈՆՔ ԱՆԱՍՈՒՆ ԿՈՒՏԵՆ

Բնութիւնը՝ ճշմարտապէս՝ լեցուն է անհետիւտութիւններով ու ամէնէն տարօրինակ բաներուն կարելի է հանդիպիլ հոն: Այս տեսակ արտակարգ բաներէն մէկն է Մսակեր քսուած տունկերն, որոնք զանազան կազմուածքներով, զորս պիտի պատմենք, ընդունակ են միջատներ բռնելու եւ զանոնք կլլելու: Իրենց թիւը շատ բարձր չէ, եւ անոնք՝ որոնք պիտի նշանակենք՝ գրեթէ միայն մարդոցմէ ճանչցուածներն են:

Փռանալի մէջ, Լանկերու կամ անտառներու մօրուտ տեղերը, մանաւանդ հարաւային գաւառներուն մէջ, հաղուագիւտ չէ հանդիպիլ գետտատարած փոքրիկ բոյսի մը, որ ամբողջովին ծածկուած է հեղուկ շթիկներով որոնք կը շողան արեւին՝ ցօղի պէս, ատոր համար է որ գեղացիները Արեւու Շող կամ Յօղի անունը կուտան անոր: Բուսաբանները զանիկա յունական բառով մը Դրոսիբայ կը կոչեն, որ կը նշանակէ « ցօղով շրջապատուած »: Եթէ մարդ խնամքով քննէ Յօղիին տակի մասերէն մէկը, պիտի տեսնէ թէ անիկա բաղկացած է զանազան մեծութիւններով տերեւներէ, ամէնքն ալ գրեթէ միեւնոյն կէտին կցուած եւ ճաճանջաւոր՝ վար-


դաձեւ զարդի մը պէս: Ամէն մէկ տերեւի պոչ խիստ բարակ ու նուրբ է, բայց վերի մասը, տակաւ կը լայննայ ալիք մը ձեւացնելու համար՝ դգալի մը տեսքը առնելով: Չորսդիէն մեծ կարմիր տերեւներու ճառագայթում մը կ'ելլէ, վերջացած՝ հետդհետէ



Հիւսիսային Ամերիկայի ձանճակալ Պատկասունկը

հաստցած փոքրիկ ծիլով մը, յաճախ ծածկուած անգոյն և կպչուն հեղուկի մը խոշոր կաթիլէ մը: Սաղարթին երեսը որ երկինք կը նայի, ծածկուած է գեղձանման երկար ստեւներով՝ չուրջը գլուխը անհամար պէս, բայց կեդրոնը նուազած է մեծութեան չափը՝ երբ մօտէն դիտուի:

Երբոր մարդ քննէ քիչ ժամանակ մը ծողիին տակի մասերէ մէկը քիչ տեսնէն պիտի տեսնէ միջատ մը որ կուգայ հանգչիլ տերեւներուն վրայ, իր սնունդը գտնելու յոյսով: Ստեւներուն ամէն մէկին հեղուկէն բռնուած թաթիկներն ու թեւերը կը տապալտըկէ յուսահատօրէն, յաճախ ապարդիւն՝ ինքզինքը ազատելու համար այն գէշ կացութենէն ուր ինկած է: Իսկոյն ամէն ջանք անօգուտ կ'ըլլայ. միջատին մօտիկ ստեւները քիչ քիչ պէպի իրեն



Սառասէնիներու մէկ օրինակը

կը ծռին, իրենց կաշուն գլուխը անոնց մարմինին վրայ տեղադրելու կերպով, ժամէ մը գրեթէ ամբողջ ստեւները դժբաղդ միջատին վրայ ինկած են:

Մէկ կամ երկու օրէն, խոտորնակ երեւոյթներ յառաջ կուգան. տերեւը կը ծաւալի, ստեւները կը ցցուին իրարու ետեւէ: Իսկ միջատը, գրեթէ անճանաչելի դարձած է. միմիայն զինքը

ծածկող մորթը մնացած է ։ Բոյսը ամբողջ միսը կլլած է ։

Հիւսիսային Ամերիկայի մէջ, ճանճակալ պատկասունկէն զատ կը պատահիս դասագիրքերու մէջ գրուած տունկերու, Սառասէնիներու, արոնք մսակեր կ'երեւան ։ Իրենց տերեւնորուն ձեւը շատ են, բայց միշտ օդին բացուած շիջանակներու կը վերածուին առատօրէն ։ Այս շիջանակներուն (քիւլահ) ներսի կողմը շաքարացած հեղուկով մը լեցուն է ։

Եթէ միջատ մը իյնայ այս փոքրիկ լիճի պէս տեղին մէջ քիչ ատենէն հոն կը խեղդուի ու կը կլլուի ։

Վերջացնելու համար պէտք է որ խօսինք ամէնէն հետաքրքրաշարժ ուրիշ մսակեր տունկի մը վրայ, որ առատօրէն կ'աճի Մատակասքարի մէջ և զոր կը մըշակեն յաճախ ջերմանոցներու մէջ ։ Անտրտմակները տարօրինակ բոյսերուն մէջ անհեթեթներն են ։ Անտրտմակի մը տերեւը վերջացած է նրբաձիգ թելով մը որ վերջին ծայր հետաքրքրաշարժ գործարան մը կը կրէ ։ Չես կրնար բաղդատու թեան զնել նուազ կամ աւելի փորեղ գարեջուրի կոտինդներու հետ, կափարիչով մը ամրացած, որոնց մէջէն



Անտրտմակներ

Գերմանները գարեջուր կը խմեն ։ Երբեմն դարձեալ « որսորդ տունկ » կը կոչեն զանոնք ։ Արդարեւ, իւրաքանչիւր գործարանը կը ձեւանայ փորուած մեծ տիկէ մը՝ ամրացած յօդաւոր կափարիչով մը ։ Տիկին եզերքը, որուն վրայ կը դրուի կափարիչը, ողորկ ու ծռած է ներսի կողմէն, շատ հարթ բոլորակաձեւ մը կազմելու ձեւով ։ Երբոր տերեւը զարգացած է, վերցած է կափարիչը ։ Տիկին ներսի կողմը լեցուած է յստակ հեղուկ մը, զտուած բազմաթիւ գեղձերէ ։ Եթէ միջատ մը տիկին մէջ նետուի, կափարիչը կ'իջնէ զայն դուրս ելելէ արգելելով ։ Անասնիկը կլլուած է ։

Թրգմ. ՎԱՀՐԱՄ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԵԹՈՏՆԵՐ⁽¹⁾

(ԱՐԻՍՏՈՒԿԷՍ Ե. ՊՕԵՍՏՈՒՆ)

Պատուերներ, խրատներ նուագեցնել, եւ հրահանգներ շահ-
ցրնել. բնաւ մոռնալու չէ որ, տղուն համար միակ յենարանը
ուսուցչին խօսքն է. ուստի ուսուցիչը այնպէս մը վարուելու է որ
իր խօսածները տղուն իմացականութեանը մէջ թափանցեն, որ-
պէսզի կարենան անոր մտքին մէջ բեղմնաւոր պտուղ մը ձեռք
բերել. այս բանն ալ կարելի է երբ ուսուցիչը պարզէն բաղադ-
րեալին, դիւրինէն դժուարին, գործնականէն տեսականին երթայ:

Իրարու կապուած եւ սեղմ հարցումներով տղոց մէջ հետաքրք-
րութիւն առաջ բերելով դիտել սորվեցնել զիրենք շրջապատող առար-
կաներուն վրայ. Տղան տրամաբանելու (raisonner) վարժեցնել.
փնտռել, գննել տալ, մէկ խօսքով, ուսուցիչը նայելու է որ տղոցը
տրամաբանութիւնը միշտ շարժումի, գործունէութեան մէջ պահէ.
պէտք չէ որ տղուն իմացականութիւնը ամօք, թուլնայ. ուստի
չփոթ, մութ և անորոշ բան մը խօսելու չէ. իրերուն յստակ եւ
ճշգրիտ ծանօթութիւնը ունենալու են տղաք:

Սրէ առիթը ներկայանայ ապացոյցներ, պատճառներ այնքան
առաջ ցանկելու մինչեւ որ տղաք այդ իրերուն նիւթական կամ շօշա-
փելի արիութիւնը ունենան. բոլոր դասանիւթերուն մէջ իմացա-
կանութիւնը չփոթեցնող, աւելորդ եւ մութ մանրամասնութիւն-
ները դուրս ձգելու է. միայն տղոց աչքին առջեւ դնելու է յատ-
կանչող եւ կառկարուն իրերը, պարզ եւ դիւրամբռնելի կանոն-
ներ, որոնք փորձով տեսնուած են տղոց կողմէ:

Միշտ եւ ամէն բանի մէջ ուսուցիչը տղաքը ներքին, օգտակար եւ
բարոյական կիրարկութեանց առաջնորդելու, հասցնելու է. օրինակի
համար ընթերցման մէջ կարդացուած նիւթէն՝ հրահանգիչ, օգտա-
կար բացատրութիւններ և տեղեկութիւններ հանելու է. կեանքի
եւ ընկերականութեան մէջ ընթանալու գործնական ճամբաներ:
Քերականութեան մէջ օրինակէն, փորձէն կանոնին երթալու է. սքո-
լաստիքական (դպրոցական) չոր ու մեքենական կանոններ գոց ը-
նել տալէ զգուշանալու է ուսուցիչը: Ուղղագրութեան նիւթերը
ընտրութեամբ տալու է. անոնք պէտք է պարզ, դիւրամբռնելի
ըլլան, դասական հեղինակներու գործերուն մէջ կարելի է գըտ-
նել այդպիսի նիւթեր: Հրահանգներու, գրաւոր վարժութիւններ-

(1) Շարունակութիւն 1 թիւէն

րու նիւթերը ո՛չ թէ կնճռոտ եւ անշահ ճիգեր թափող, լեզուն զժուարացնող ըլլալու չեն, հապա հրահանգի այդ նիւթերը ընթացիկ կեանքէ առնուած, իրողութենէ մը քաղուած, օրուան դասերէն փոխ առնուած ըլլալու են։ Նոյնպէս այդ նիւթերը կըրնան ըլլալ պատմական, աշխարհագրական, տեղագրական։ վերջապէս տղոցը ուշադրութիւնը հրաւիրող, հետաքրքրութիւնը շարժող նիւթերը ըլլալու են։ Ուսուցիչը ձգելու է աշակերտին որ ինքնիրենը գիւտ ընէ, եւ միշտ սեւ տախտակին վրայ գրէ։

Թուաբանական կամ հաշուագիտական գործողութիւնները, խրոնոմիտրները կեանքի պէտքերուն վրայ հիմնուած, գործնական կեանքի պատահող խնդիրներ առնելու է։ Աշխարհագրութիւնը սորվեցնելու է քաղաքները, Աստիճանաբար տղուն միտքը ընդարձակելու է նախ իր բնակած փողոցին, յետոյ թաղին, յետոյ գիւղին եւ վերջապէս քաղաքին ու երկրին անցնելու է տեղագրական ծանօթութիւններ աւելցնելու է նոյն տեղւոյն նկարագրութիւնովը, ճարտարարուեստական կամ բնական արտադրութիւնները ցուցնելով, նաեւ բնական ու քաղաքական աշխարհագրութիւնը ընելով։ վերջապէս այդ տեղւոյն պատմական ինչ դէպք կրած ըլլալը երեւան հանելով։

Պատմութեան համար իւրաքանչիւր դարի վրայ ուշադրութիւնը հրաւիրել տղոց, անոնց իրենց ժամանակին համեմատ ունեցած կարեւորութեամբը։ Նախընթաց դարերը շուտով անցնելու է, եւ աւելի ծանրանալու է մեր ապրած դարուն վրայ։ Բոլոր այն մանրամասնութիւնները որ խորունկ հմտութեան կը պատկանին, ատենք գոհելու կամ անտես առնելու է որպէս զի ուսուցիչը ազգի մը զարգացման գլխաւոր գիծերը ակն յայտնի մէջտեղ հանէ, ցուցնէ։ Զարգացման ընդհանուր գիծերը relief ի մէջ ցուցնելու է ուսուցիչը, ո՛չ թէ պատերազմներու, աւերումներու, մէկ խօսքով զուտ քաղաքական տեսակէտով, հապա բացտարելու է թէ դարերու յաջորդութեանը մէջ ժողովուրդները գաղափարի ի՞նչ բարեշրջումներ ունեցած են։ այլ եւ այլ կրթական կամ ճարտարարուեստական ի՞նչ շինութիւններ հաստատութիւններ հիմնած են։ Մտքի ընկերական բարեւոքումի նշաններն միայն ճշմարիտ քաղաքակրթութիւն կը կազմեն։

Տղոցը երեւակայութիւնը արթնցնելու եւ հոգիին բարձրացընելու համար, մարդիկը եւ իրերը նկարագրութեամբ ներկայացընելու է։

Ինչպէս Բասքալ ըսած է, «Ֆրանսան մեծ էակ մը ներկայացընելու է, որ մշտնջենապէս կ'ապրի, եւ այս գաղափարէն հանելու է տոհմային ոգին, թէ անոր ի՞նչ պարտականութիւն ունինք, եւ ի՞նչ բան կը պահանջէ ան մենէ»։

Ահա՛ աս պէտք է՝ ըլլայ դպրոցի մը մէջ տրուած դասերուն ոգին, և նմանապէս ասոր պէտք է ձգտին մանկավարժական կադմակերպութեան, նախնական ուսուցման մէջ ընդհանուր եւ մասնաւոր դասախօսութիւններուն մեթոտները եւ դասաւանդման եղանակները:

Արդարեւ, կ'ընդունինք որ այս կերպ ուսուցումը դժուարութիւններ ունի, այո՛, մենք չենք ուրանար: Բայց մեր ուսուցիչները ինքնիրենին ալ պիտի կրնան վարժութիւններով յաղթել դժուարութեանց. պիտի կրնան հասկնալ թէ իրենք ի՞նչ ընելու են դասախօսութեան մը ատեն տղոց մէջ հետաքրքրութիւն, ուշադրութիւն, վարժնում, մէկ խօսքով ի՞նչ ընելու է որ կեանք առնէ դասարանը. ինչու որ այս կերպով միայն կարելի է իրապէս դիւրացնել դասաւանդման եղանակը, հեշտօրէն ըմբռնել տալ տղոց դասին առարկան, որով ոյժ եւ զարգացում միայն ա՛յս ճամբով կարելի է ձեռք ձգել:

Նոյնպէս ուսուցիչը պիտի համոզուի որ եթէ այդ մեթոտը գործադրէ, պիտի կրնայ թափանցել տղոց մտքին մէջ, այդ մեթոտին խղճամիտ եւ խելացի կիրառումովը միայն պիտի կրնայ տղոցը ո՛չ միայն բան սորվեցնել, հոգւտ ընել, հապա նաեւ բարձրացնել, դաստիարակել զանոնք, ազնուացնել անոնց միտքը ու հոգին, արդարեւ խիստ ծանր ու դժուարին գործ է. ինչու որ անոր նպատակն է տղան պատրաստել, կազմել անոր նկարագիրը հաստատուն եւ բարոյական հիմ մը դնել է, մէկ խօսքով ապագայի մարդը պատրաստել է:

Վերոյիշեալ դիտողութիւնները թէ՛ իրենց ճշդութեամբ և թէ՛ օգտակարութեամբ, աւելի ընդհանուր մտքով մը յղացուած կը տեսնենք 1887ի Փրնս. բրօկրամներու մեկնութեանց մէջ ալ, ուրեմն արդէն պաշտօնական պահանջ մը դարձած է, եւ առհասարակ ամէն կարգի եւ ամէն ճիւղի ուսուցիչներէն անխտիր ի՞նչ պահանջուի: Այս սկզբունքները ամբողջ դաստիարակութիւնը կ'ընդգրգեն հոս կ'արտատպենք այդ բնագիրը:

« Նախնական ուսուցման ամէնէն յարմար միակ մեթոտը ան է որ, թէ՛ ուսուցիչը եւ թէ՛ աշակերտները կը մտերմացնէ, այսինքն անոնց մէջ գաղափարի փոխանակութիւն մը կը հաստատէ, խելացի, պարզ եւ յարափոփոխ ձեւերու տակ, որոնք սակայն աստիճանական զարգացում մը ունին: Ուսուցիչը այդ մեթոտով տղոցը գիտցած բաներէն կըսկսի, ծանօթէն անծանօթին, դիւրինէն դժուարին կ'երթայ, Նոյնպէս բարոյական հարցումներու կամ դրաւոր պարտականութիւններու աստիճանական բարձրացումով մը տղոց հետեւցնել կամ ներքին արժէքը երեւան հանել կուտայ

ինչ ինչ ընդհանուր սկզբունքները. օրէնքի մը գործնականացումը, ընկերական կեանքի մէջ ընթանալու գիտական միջոցները. կամ թէ ասոր հակառակ, անգիտակցօրէն գործադրուած սկզբունքները, կանոնները դիտել տալ:

ՀԵՏՈՒՔՐՔՐԱԿԱՆՈՒԹ

Պատմական նշանաւոր անձանց մէկ քանիներուն

պատահական վախճանը

Յունական ողբերգութեան հայրն հանգիսացող Էսքիլէս՝ Սի. կիլիա գտնուած ատեն դուրս ելեր ու արեւուն մէջ նստեր էր ճաշատ գլուխը բացած կարծես արեւուն լոգանք մ'ընելու նպատակով: Արծիւ մ'ալ որ խոշորկեկ կրիա մը բռնած կ'ալանար օդին մէջ, ժայռի կարծր կոյտ մը կարծելով Հելլէն ողբերգուին ճաշատ ու ողորկ գլուխը, իսկոյն կտուցէն նետեց կրիան այդ կարծեցեալ քարակոյտին վրայ, որպէս զի կրիան ջախջախուի ու միսն ուտել կարենայ. սակայն արծիւը փոխանակ կրիան միսն ուտելու, Էսքիլէսի գլուխը կերաւ, զի ջախջախուեցաւ ոչ թէ կրիան՝ այլ գանկն ողբերգուին որ իսկոյն փչեց հոգին:

* * *

Հելլէն նշանաւոր ողբերգակներէն Սոփոկլէս ալ մեռաւ խոր ծերութեան մէջ ուրախութենէն:

* * *

Նոյնպէս Հելլէն նշանաւոր ուրիշ ողբերգակ՝ Եւրիպիդէսն ալ երբ իրիկուն մը Արքեղայոս թագաւորին հետ ընթրելէն յետոյ՝ տուն կը վերադառնար, շուներ վրան յարձակելով զինքն իսկոյն յօշ յօշ պառառեցին:

* * *

Հելլէն նշանաւոր քնարերգակներէն Անակրէոն ալ մեռաւ խաղողի մը կուտէն որ կոկորդը մնաց ու բանաստեղծին հոգին տաւ:

* * *

Վառեկի ոսկոր մ'ալ Ամերիկացի մեծանուն Հենրիկոս Նոքս զօրավարին մահ պատճառեց:

* * *

Ժէրդ. դարուն մէջ ծաղկող Դանիացի համբաւաւոր գրագէտ մը, Ճէրմօըիօ՝ մսի կտորով մը խեղդուեցաւ:

* * *

Իտալացի նկարիչ մը՝ Կուխտոպոնի, Թուրինի մէջ 1709ի սառտիկ ձմրան ատեն, տանը սանդուխէն վար գլորեցաւ. բայց ար-

դէն ինքն ալ նիհարակազմ ըլլալով՝ չի կարողացաւ ոտքի ելնել, եւ օգնութիւն պօռալու իր ձայնն ալ ո՛չ մէկէ մը չի լսուելով ցուրտէն մեռած գտնուեցաւ երկրորդ օրը:

* * *

Ուրիշ համբաւաւոր գրագէտ մ'ալ, 1763 տարւոյն Նոյեմբեր ամսոյ 23ին Շանթիլէյի աւանին անտառին մէջ ծառի մը տակ մահացած ինկած էր. գիւղացի վիրաբոյժ մ'ալ որ նոյն օրն այն տեղէն կ'անցնէր, կարծելով թէ մեռած է, սկսաւ խեղճ գրագէտին մարմինը ճեղքել, որպէս զի դիագնոստիկն ընէ: Վիրաբուժին հարուածներու սախակութենէն սթափելով Բրէյվօ տ'էկզիլ ահագին ձայնով մը պօռալէն իսկոյն մեռաւ:

* * *

Ֆրանսայի նշանաւոր կատակերգակը Մոլիէր, 1673 տարւոյ Փետր. ամսոյ 17ին, երբ հազիւ 51 տարու էր, իր յօրինած մէկ կատակերգութիւնը ներկայացուցած պահուն, յանկարծահաս Ղալային զօրաւոր ցնցում մը զգալով՝ մեռած դուրս հանուեցաւ թատերաբեմէն:

* * *

Հռչակաւոր ողբերգու դերասաններէն Մօնֆրէօրի՝ Ռասինի Անտուանգ անուն սրտաշարժ ողբերգութեան մէջ Ուլրէստի մասը ներկայացուցած ատեն այնքան ոգեւոր եւ այլ յայլմէ եղած արտասանեց Ուլրէստի վերջին կատաղութիւնը բացատրող խօսքերը որ երակներուն մէկը ճաթեցաւ եւ արիւնը դուրս պոռթկալով յանկարծամահ եղաւ:

* * *

Նոյնպէս Մոնդորի ողբերգակ դերասանը Դրիստանի Հերովդէս անուն ողբերգութիւնը ներկայացուցած ատեն թատերաբեմին վրայ մեռաւ:

* * *

Միլանցի Սէդդա անուն քիմիագէտը՝ Ժէ. դարուն մէջ վրան ինկած շանթաքարէ մը մեռաւ:

* * *

Տիւշէն պատմաբանն ալ 64 ամեայ հասակին մէջ՝ սայլի մը տակ ջախջախուելով հոգին աւանդեց:

Լանկլէ. Տիւֆրէնուա Ֆրանսացի հոյակապ գրագէտը, (1755), իրեն յղուած նորատիպ մատեանի մը ընթերցումէն սաստիկ ճանճրոյթ զգալով՝ սկսաւ քնանալ. սակայն քունին մէջ քովը եղող կըրակին մէջ գլտորելով մեռաւ 82 տարեկան հասակին մէջ: Նմանապէս իրմէ առաջ Ժան Կոսլէն Ժ.Ջրդ դարու բազմահմուտ գրագէտ մատենագիրը եւ գերմանացի Ռու նկարիչը, 1685ին, պատահական կերպով կ'ակն իյնալով՝ մեռած էին:

ԲԺՇԿՈՂ ԾԱՌՈՒՄ

Ամէն ժողովուրդ աւանդաւէպէր ունի ու առասպելներ իրենց նկարագիրը ու հոգին յատկանշող պատկերներով առլցուն, և իրաւ ալ անոնք կրնան քողարկել ժողովուրդներուն մութ մընացած անցեալը, ցուցնելով վճիտ յստակութեամբ մը անոնց նախկին բարքերը ու խորհուրդի որքանութիւնը: Որովհետեւ, անոնք ամէն ալ միամիտ ու ճշմարտանման պատկերներ են մերթ կսկըծացնող ուժգնութեամբ մը շինուած ու մերթ ալ խորունկ ու ապշեցուցիչ գեղեցկութիւններով ընդելուզուած:

Հիմա պիտի նկարագրեմ դեռ նոր մոռցուած աւելորդապաշտութիւն մը՝ Ատաբաղարցիներու կեանքէն, ուր պիտի նշմարենք նախապաշարովի սաստկութիւն մը, խորապէս հաստատուած մանաւանդ իգական սեռին մշտաբոլորք սրտին մէջ, ու դեռ կը յիշեն այդ մօտիկ անցեալը հաւատքի անուշութիւն մը խառնելով ճայներնուն:

* * *

Դաշտերուն մէջ, արեւին վայրի ու կրակոտ ճառագայթներուն ներքեւ, կը թափառէր Բենիամին տենդին կրակներուն տակ հեհեուուն. իր դեղնած դէմքին թուրութիւնը որ կը ջանար կծկուիլ, անդադար կծկուիլ ու խտանալ, կ'երերար բէթէի մը երեսին պէս իր ոտքերը յոգնութեան ծանրութեան տակ կը դողդալային, ու կուրծքը ճնշուած թանձր ու նեղ զգեստներէն վեր կը նետուէր երբեմն երբեմն ձիերու թօթուրտութիւն նման: Իր ոտքերը բիրտ ամրութիւնն ունէին չորցած արիւններուն: Իր հալած աչքերը կարմիրներու մէջ կը վառէին մերթ ու մերթ ալ ոսկի կը դառնային, ու կը տքար ինք իր զգեստներուն ծանրութիւնը քաշելով իր ետեւէն: Գինովցեր էր կարծես, կատարեալ վայրագ արտայայտութիւն մը հագուեցնելով իր դէմքին:

Դաշտին գեղեցկութիւնը, կանանչները, լեռներուն ելեւէջաւոր շարքը, — երկինքին անոյշ կապոյտները տենդոտ հրապոյրով մը կը լեցնէին գինքը, կը պտտէր անդադար Բենիամին իր մեղրագոյն շրթները իրարու գամած: Զուրերուն քովէն կ'անցնէր ստունացած ստուէրներէն գրկուելով, ու փետուրի պէս թաւ մարգերուն մէջէն կ'երթար տնտնալով, իր ոտքերուն թեթեւ հպանցքը աւելնով մարդին հարթագիծ կանանչը: Արեւը կը վառէր ջահերու դէմ դրուած հայելիի մը նման լեղակապոյն երկնքէն կախ մոգական լապտերի մը ծալքերով: Բենիամին մարած ու աղբսող նայուածք մը կը զրկէր այս մեծ հեռապատկերին: Ամէն բան կը ձեւափոխուէր իր հիւանդ աչքերուն առջեւ. ամբողջ բնութիւնը

նեղ կուգար, ու տարտամ զգայութիւն մը կը պտուտկէր իր մարմնոյն մէջ, զայրացկոտ շեշտեր դուրս թափելով իր սեղմուած կողորդէն: Խենթեցած որսորդ մըն էր կարծես, իր հրացանը՝ ժայռերուն մէջքին վրայ փշրած:

Լայն դաշտի մը եզերքը հասաւ: Դաշտը կ'երկարէր լռին վայրենութեամբ, ամէն տեսակ կանանչներով ու ծաղիկներով հարուստ, որոնք սիրուն աղուորութիւն մը կը հագուէցնէին դաշտին երեսին: Ապրիմ-մեռնիմներ կը ծաղկէին, ու գորտի ծաղիկներ՝ դաշտին բաց դէմքին՝ մեռելի գոյն մը կը քսէին: Տեղ տեղ մամուռները կը կանանչէին գետինը թաւիչ փայլունութեամբ, ազնուականներու կուրծքը զարդարող կանանչին պէս, ու ասոնց մէջտեղ կ'արձանանար վիթխարի ու լայնկեկ ծառ մը: Բենիամին յոգնած ու թուլցած իր ոսկրուտ կոնակը ծառին կոթնցուց պաղ նայուածք մը ձգելով հեռո՛ւն, շատ հեռուն: Թոյլ ու հոյլ շունչ մը դուրս կ'երկնար իր բերնէն, ու կծկտած իր դողացող մարմնոյն վրայ ծռեց ծանրացած գլուխը, նման հանդարտիկ ոչխարի մը որ անձայն կը ծռէ իր բրդոտ գլուխը մարդուն անսիրտ շարժումներուն դիմաց: Տիեզերքը իր վրայ դարձաւ անգամ մը կարծես ու մահուան հառաջքի պէս շունչ մը առաւ: Կը դողար ամբողջ մարմնով, գիշերուան ցուրտին տակ մնացած մանկան նման: Անշուշտ տենդը պիտի ուտէր իր միսը: Շուքերը միայն կ'երերային իր անշարժ ու ոսկիացած աչքերուն առջեւ, ու մեծ լռութիւն մը կը ծանրանար:

Ծառը երերաց յանկարծ ու արմատէն ճեղքուիլ սկսաւ մինչեւ բունը. Բենիամինի սրտէն սառսուռ մը անցաւ, իր ոսկորները կճրտեցան, ու բուռի մը պէս՝ որ յանկարծ կ'արթնայ մութին մէջ ու ամէն բան փայլուն ու իրական կը տեսնէ, Բենիամին կանգնեցաւ ոտքի՝ յանկարծահաս սարսուռէ մը բռնուած, երազէ մը ցնցուածի պէս. ուժովցած՝ սկսաւ դիտել ճեղքած ծառը, որ լայնցեր էր: Կը խորհէր Բենիամին:

— Բան մը կայ հոս, փափսաց իքնիրեն. Աստուածային բան մը, ոյժ մը, անպատճառ նուիրական տեղ մըն է ասիկ:

Ու երեք անգամ ծառին մէջէն անցաւ Բենիամին: Ժպիտը կը կարմրէր իր շրթներուն վրայ. Բենիամին առողջացեր էր:

Դաշտերուն մէջէն, գարնան անուշութիւնը ծծելով, Բենիամին տուն վերադարձաւ, ու պատմեց ամէն բան: Ամէնքը հաւտացին անոր, խորունկ միամտութեամբ մը:

* * *

Ծառը յաղթ կանգնած, իր հաստարմատ ճիւղերը ծոյլ ծոյլ վար կը կախէր ցուրտէն թմրած թեւերու նման, հսկող մոմի մը

պէս կը հսկէր կարծես դաշտին լուսթեան մէջտեղ, դաշտին մեծ խորանին առջեւ վառուած, եւ որուն նուիրած էր իր ժողովուրդը իր սիրտը, իր հոգին եւ իր զգացումները, ու կը նայէին անոր այնպէս՝ ինչպէս կուսապաշտ մը իր քուրմերուն: Կը սիրէին զայն ու կը հաւատային անոր, անոր զօրութեան ու անոր ներքին ճայնին, ու ծառին պատկերը սուրբի մը պատկերին պէս կը կանգնէր անոնց մէջ:

Ժողովուրդին վախկոտ խորհուրդներուն առջեւ սրբացած այս ծառին մէջ, է՛ն առողջ ուժը կ'ապրի եղեր, Ապրիլ-մեռիլ-ի հսկայ գաղտնիքներով լեցուն:

Առոյգ յուզում մը դուրս կը պոսկար ամէն անգամ մօր մը սրտէն, ու կուլային հոն մայրերը իրենց մէջ արթնցող յուզումին առջեւ, ու կը հեծկլտային մահուան գաղտնիքէն թուլցած, աղօթքներ մրմնջելով վախկոտ ճայներով: Մայրական է՛ն փափուկ զգացումը ու է՛ն անուշ սէրը անոնց նայուածքներուն մէջ կը պատկերանար:

Հիւանդ մանուկը գրկած կ'անցնէին երեք անգամներ այդ ճեղքուածքին մէջէն հաւատքի մեծ ուժով, զա՛յ այն մանկան որ Կը սկսէր լալ այդ վայրկենին. օ՛հ, մահուան նշանն է ան, արցունքը կ'իմացնէր մահուան գալուստը:

Հաւատացողներէն փոքրիկ նուէրներ կ'ընդունէր ծառը:

Հիմա Զաքար-Ղալախ անունով կը յոբջարջուի ծառը, և Ատա-Բազարի հիւսիսային կողմը կ'իյնայ հազիւ քառորդ ժամ մը հեռու:

Ատա—Բազար

ԿԱՐԷՆ

ՃՈՆ ՔԻՅ ԵՒ ԻՐ ՔԵՐԹՈՒԱՇՆԵՐԸ

1795—1821

(Շարունակութիւն առաջին թիւէն)

Բ.

ՔԻՅԻ ԿՐԱՄ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԵՐԿՈՒՆՔԸ

Օր մը Քիցի ընկերներէն մէկը կարդաց Սրէնսըր բանաստեղծին Հաւսնեզը եւ փոխ տուաւ նաեւ անոր Պարիկնեռու Դեխոն:

Այս գործերու ընթերցումը պատճառ եղաւ Քիցի մէջ տեսնուած երկնային հուրին՝ բանաստեղծութեան՝ ճառագայթումին: Դեռատի երազողը սկսաւ առաջանալ, թէեւ դեռ ոչ մէկ նշանա-

և որ արարուած տեղի կ'ունենար անոր գրիչին յայտնի ազդեցու-
 թեամբ, քանի որ հրապարակը Պայրընի ու Շէլլիի, Ուրտսուորտի
 ու Գոլրիճի, Սըր Վոլթըր Սքոթի յուսթող հանճարներուն հրա-
 չակերտներով ողողուած էր: Ասոնք արտաքսիչ ազդեցութիւն մը
 կրցան ի գործ դնել Մանչի եզերքներէն անդին ալ, սակայն Քից
 այս տիեզերական հանճարներուն բացած դափնեպսակ ճամբէն
 չուզէիմք անցնիլ, ինքնուրոյն շաւիղ մը գծելով անկից սկսաւ ա-
 ուաջ ընթանալ, հակառակ բազմադիմի խոչընդոտներուն: Քիցի
 պատանեկան երեւակայութիւնը բռնկեցաւ Սքէնսըքի Պարիկներու
 Դեխոյին մէջ կախարդական գրչով մը նկարուած ասպետական
 կեանքի բոլոր երեւոյթներն ու կրկնեւերոյթները տեսնելով:
 Դղեկատիրուհիներու, գաճաճներու եւ ուրիշ ըղձանուշական տե-
 ւաքաններու հոյ մը Անդլիսիոյն ապագայ հեղինակը կախարդե-
 ցին: Ստուգիւ, Սքէնսըր անգլիական գրականութեան պատմու-
 թեան մէջ եղած է այն իսկատիպ բանաստեղծը, որ ամէնէն ա-
 ւելի կրցած է ազդել պատանի երեւակայութիւններու վրայ եւ
 պատճառ եղած է զանոնք դէպի գրականութիւն վարելու մեծ
 գործին: Հոս անցողաբար մտադիր կ'ընենք ընթերցողը որ Սքէն-
 սըրի Պարիկներու Դեխոն միութենէ զուրկ գործ մըն է, յուսթող
 երեւակայութեան մը սանձարձակ երազներուն ստեղծագործու-
 թիւնն է այն. թէեւ քննադատութեան մը առաջին ակնարկին իր
 փայլն ու հմայքը կը կորսնցնէ, սակայն տառնամեայ Քիցի երե-
 ւակայութեան համար հրաշակերտ մը կրնար ըլլալ այն և ինչպէս
 ալ եղաւ: Գրականութեանց պատմութիւնները բացորոշակի կը
 ցուցնեն թէ՛ անտիական միտքերու վրայ ազդելու համար հրա-
 չակերտներու հարկ չկայ, այլ մոգական տեսարաններ անկապօրէն
 ցուցադրող գրութիւններ, որոնց մէջ թերեւս առաջինն է Սքէն-
 սըրի սոյն գործը, որմէ ազդուեցաւ տառնամեայ Քից: Էտմոնթընի
 բժիշկին հետ — որ իր վարպետն էր — գժտելով 1814ին Լոնտոն
 հաստատուեցաւ բժշկութիւն ուսանելու համար, երբ դեռ հազիւ
 19 տարեկան կար: Իր երկու եղբայրներուն հետ կ'աշխատէր խա-
 ղաղիկ. բժշկական վարժարանի աշխատող ուսանողներէն մէկը ե-
 ղաւ, որ յետոյ աստիճան մըն ալ առնելով « Կիւյս Հասրիթ'ը »
 հիւանդանոցը ղրկուեցաւ գործնական փորձեր կատարելու համար:
 Սակայն շատ չանցնիր երբ բժշկութենէն տակաւ խորշիլ կ'սկսի:
 Ապագայ մեծ բանաստեղծը բժշկական արուեստը իրեն տաղան-
 գին հակոտնեայ կը գտնէր, այնուհետեւ մտաթափ վիճակ մը
 ստանալ սկսաւ բժշկական դասերու միջոցին: Այսպէս կը գրէ իր
 բարեկամներէն մէկուն. « Անցեալ օր, դասի ատեն, արեւու ճա-
 ւաղայթ մը մտաւ սենեակէն ներս, անոր հետ միասին ամբողջ

գունտ մը արարածներու որ կը ծածանէին լոյսին մէջ, եւ զիս ալ քշեցին իրենց հետ դէպի Օպերոն եւ դէպի պարիկներու երկիրը»։ Այս տողերը ըզձանոյշներու սիրահար սիրտ մը կը պրիսմակեն եւ ոչ թէ բժշկական գործողութիւններու հանդէպ վիճառաւոր սիրտ մը, որ բնաւ չի զգար նշգրալը ուտողին խշխշուքը։ Քից չէր կրնար հանդուրժել այդօրինակ արտաշարժ գործողութեանց, սղոխի մը աննշան շունչէն շարժող ալեակին կը նմանէր իր սիրտը։ Լէյկ Հընդ, քաղաքագէտ ու բազմահմուտ մատենագիրը, որ 1828ին Լորտ Պայրընի վրայ գրած ուսումնասիրութեամբ բովանդակ եւրոպայէն ճանչցուեցաւ, Քիցի վրայ մեծ ներգործութիւն ունեցաւ թէ՛ իր գաղափարներով եւ թէ՛ իր կեանքի վերաբերութեամբ ունեցած աշխարհիկ տեսութիւններով, որոնք երազուն երիտասարդը հաճոյքի ընկերութեան սիրահար մը ըրին։ Դարձեալ պիտի հարկադրուինք մէջ բերել իր ընկերներէն մէկուն վկայութիւնը կեանքի՝ այս նոր չըջանի յատկանշական կողմերը հասկնալու նպատակաւ որ է հետեւեալը։ «Սկեպտական ու ժողովրդային դպրոցէն էր ան, իր ժամանակին տարածուած գրական նորութեանց փաստաբան կը հանդիսանար և կը քննադատէր ուսումնարանները»։ Քիցի ընկերով սոյն վկայութիւնները ժամանակուան մը համար կրնային ճշմարիտ ըլլալ, որովհետեւ փոթորկայոյզ ժամանակին, թերեւս ամէնէն չէզոք դիրք բռնողը եղաւ ան, ու դիւանագիտական կնճիռներով երբէք չզբաղեցաւ։ Բացարձակապէս բանաստեղծ ծնած էր, իրեն համար քերթուածէն դուրս ամէն խնդիր իրական գետին մը չէր ընծայեր։ Լէյկ Հընդի Բոբ Տրայտընի դպրոցին կը հակառակէր, ինք Սթենսըրի ըզձանոյշ երազանքներով կը սնանէր։ Քից բանաստեղծութիւնը կը նկատէր երեւակայութեան գործը, չեչտ ու փայլուն ոտանաւորներով գեղեցիկ ձեւերու կոչում ընելու արուեստը։ Խիզախ պայքարողը եղաւ տասնեութերորդ դարու բանաստեղծներու դէմ, գրական քինախնդրութիւն մը, որուն գրգիռ տուողը Լէյկ Հընդ էր։ Խանդավաւ քերթողը այսպէս կ'երգիծէր ԺԸ. դարու պոէտիկոսները. «Ոտանաւորի հազարաւոր արհեստաւորներ բանաստեղծի դիմակը կը կրեն։ Ամբարիշտ ու անիծեալ սերունդ, որ կը հայհոյէ քնարի շողշողուն աստուածին դէմ եւ որ բան մըն ալ չի գիտեր (․)։ Ո՛չ, կ'երթային ծածանելով հնամաշ խեղճուպատառ նշանացոյց մը, ողորմելի վերատառութիւններով զարդարուն եւ որ խոշորագիր կը կրեն Պուալոյի մը անունը (․)»։ Ֆրանսական դպրոցին դէմ արձակուած թունաւոր նետեր էին ասոնք, որ միաժամանակ երեւան կը հանէին Գեղեցկութիւնը իբրեւ անհունութիւն մը ըմբռնող քերթողին անձնական էութիւնը, որուն իր

Եսին պատգամներէն զատ ամէն բան գռեհիկ ու երկրորդական կը թուէր: — Քիցի հետ միեւնոյն ատեն սերտիւ կապուեցաւ Հայտըն կրայոյզ ու բոցեռանդ նկարագրի տէր նկարիչը, որ ինքզինքը Անգլիոյ ամէնէն մեծ նկարիչը կը դաւանէր: Այս չափազանցութեանց մարմնացում նկարչին — որ տխուր վախճան մը պիտի ունենար անձնասպան ըլլալով 1846ին — Քիցի գրած նամակներն ալ խիստ հետաքրքրական են: Հայտընի նամակները իր հոգիին պատկերացումը կը թուին ըլլալ Մայրալիւր երեւակայութեան մը զսպանակէն մղուած խառնուածքներու վախճանը, ընդհանրապէս տուամ մը կ'ըլլայ, ինչ որ եղաւ Հայտընի:

(Շարունակելի)

ՄԻՀՐԱՆ ԹԱՊԱԳԵԱՆ

ԶՈՒՍՐԺԱԼԵՑ

Վեց տարեկան տղեկ մը թաղուած է խորունկ խորհրդածութիւններու մէջ: Հայրը կը հարցնէ անոր պատճառը:

— Հայրիկ, կարծեմ թէ մեր դպրոցի վարժապետը բան մը չգիտեր:

— Ինչէ՞ն կարծեցիր նայիմ:

— Շատ բաներու մէջ դիտեցի ատանկ ըլլալն. օրինակի համար, ամէն անգամ որ գրատախտակին վրայ բան մը գրէ՝ առաջ ինքը կարդալու տեղ՝ մեզի կարդացնել կուտայ որ սորուի:

* *

Մայրը շաքար մը կուտայ փոքրիկ Մաքրուհիին:

— Ի՞նչ պէտք է ըսել:

Մաքրուհի (ժպտելով) — Հատ մ'ալ տուր:

* *

Փոքրիկ Գրիգոր դրացուհիին տունը ճաշի հրաւիրուեցաւ: Սեղանին տակ տանտիրուհին անուշութեամբ դիտել տուաւ պզտիկ հիւրին թէ՛ ձեռքերը անձեռոցին կը սրբեն եւ ո՛չ թէ սեղանին ծածկոցին:

— Ներողութիւն, տիկին, ըսաւ Գրիգոր, կարծեցի թէ նորէն անձեռոց մը աղտոտելն աւելորդ է, քանի որ սեղանին ծածկոցն արդէն աղտոտ է:

* *

Խաղն ո՞վ ըրած եղաւ. — Դիւղի մը դպրոցին տնօրէնն, հին, ներկերը թափած, տձեւ կառք մը ունէր. ասիկա էր իրեն միակ փառքն ու հարստութիւնը. ամէն իրիկուն արձակուրդէն ետքը մէջը բազմելով՝ գիւղին փողոցներէն կ'անցնէր, կարծես զայն ա-

մէնուն ցուցնելու համար։ Դպրոցականները ստակադի կերպով հաւկառակած էին իրենց տնօրէնին այս սովորութեան, աւելի կառքին տգեղութեանը՝ քան թէ անոր փառասիրութեանը համար։

Սր մը խորհրդակցելով՝ որոշեցին որ կառքը պարապ ձգուած ժամանակ մը, առնեն մօտը գտնուած անտառը տանին եւ մացառաներուն մէջ ծածկելով՝ հոն թողուն։

Տնօրէնը կերպով մը իմացաւ այս քաղտնիքը, բայց չիմանալու զարկաւ։ Աշակերտներուն որոշած իրիկունը կառատուն քնաց եւ կառքին մէջ մտնելով՝ նստարանին տակ պահուրտեցաւ։

Քիչ ետքը տղաքներն ալ եկան ու մէյմէկ տեղերէն բռնելով սկսան կառքը դուրս հանել։ Միշտ իրարու փսփսալով՝ « Լուռ կեցի՛ր, ուշադրութիւն ըրէ՛, եւայլն »։ Բայց մոռցեր էին կառքին մէջը նայելու անգամ մը։ Բաւական աշխատելէ վերջ ծանր գործին փոզոց հանեցին։

Կը զարմանային թէ՛ ծերուկ ձիու մը քաշած կառքը այսքան ալ ծանր կ'ըլլա՞յ եղեր։

Երեք ժամ չարաչար յոգնելէ ետքը՝ վերջապէս անտառ հասն, եւ ծառերուն ետին քաշելով ճիւղերով ու մացառներով զայն կրցածնուն չափ ծածկեցին։ Գործերնին աւարտած էր՝ բայց իրենց հոգին ալ ելած։

Իով քովի շարուեցան խոտին վրայ ու իրար շնորհաւորել սկըսան, « Անպիտան ծերուկ »-ին փառամոլութենէն ազատած ըլլալնուն, երբ յանկարծ կառքին պատուհանը բացուեցաւ եւ տնօրէնը իր ամենաթպտուն դէմքովը բարեւելով զանոնք, ընաւ։

— Հիմա՛, բարեկամներս, ետ դարձուցէք կառքս, ատենը շատ ուշացաւ... »։

* * *

Քնութեան ժամանակ.

— Կրնա՞ն կաթընտու կենդանի մը ըսել որ ակուայ չունենայ։

— Այո՛, միւսիւ։

— Հսէ՛ տեսնեմ։

— Մեծ մայրիկս, միւսիւ։


* * *

Սնանկ վաճառական մը, դպրոցի քննութեան միջոցին։

— Տղա՛ս, ի՞նչ է փոխանակագիրը։

— Չեմ գիտեր։

— Երանի՛ր քեզի։



Բ. ՄՐՅՈՒՄ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

Այսօր կը սկսինք մեր երկրորդ մրցումն ալ, որուն նիւթն է.

1. — Ի՞նչ արհեստ կը սիրէք եւ ինչո՞ւ համար:

2. — Արհե՞ստը կը սիրէք թէ արուեստը եւ ինչո՞ւ համար:

3. — Ի՞նչ են արհեստներուն կարեւորութիւնը:


Կը խնդրուի նաեւ գրել. — Ձեր տարիքը. — Դպրոցական էք թէ ոչ. — Ի՞նչ են ձեր նախընտրած գիրքերը. — Ի՞նչ կարդացած էք, եւ ի՞նչ կը կարդաք դեռ. — Ո՞ր ծնած էք. — Ո՞ր կը բնակիք:

Այս մրցումին կրնան մասնակցիլ չափահասներ ալ:

ՊԱՅՄԱՆԱԺԱՄ Մինչեւ Մարտ 1:


Պ. Բ. Բ.

ՆԿԱՐՀԱՆԵԼՈՒԿ



Եթէ կ'ուզէք սոյն նկարհանելուկը յուծել՝ առանց ձեր Հանրագիտակն կտրտելու, պէտք է Թափանցիկ Թուղթի վրայ կապար զրչով կամ մելանով գծէք 312դ ու. 312դ, եղբրքի զիծերուն վրայէն մկրատով կտրել ու՝ քառակուսի մը ձեւացնել. յետոյ ծալել այնպիսի կերպով մը՝ որ երկու հատ Թուղթն ելլէ:

ՔՐԻՍՏՈՍԻ ՍՏՈՒԵՐԱՆԿԱՐ ՊԱՏԿԵՐԸ



Սոյն պատկերն ընդօրինակեցէք եւ փակցուցէք բարակ խաւաքարտի մը վրայ. չորնալէն յետոյ սուր զմելիով եզերքի զիծերը կտրեցէք, նոյնպէս մէջտեղի զիծերն ալ կտրելով կտորներն հանեցէք: Այս զործողութիւնը կատարելէ յետոյ՝ սեղանի մը վրայ կաննեղ կամ մոմ մը վառեցէք եւ սպիտակ պատի մը դիմաց դրէք. կտրուած խաւաքարտն եթէ պատին ու կաննեղին մէջ բռնէք՝ պատին վրայ պիտի դրոշմուի ստուերով Քրիստոսի գեղեցիկ զլուխն:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ—ԱՐՏՕՆԱՏԵՐ
ԱՐՄԲԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ—ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապը Ալի Ճատտէսի, թիւ 33, Իգտամ լրագրին դէմ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱԲԱԹԱԿԱՆ

Ն Ի

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատր

30 փարայ

Առաջնորդ վանառականացի 12 տետր զոս առնել ուզողը պէտք է վճարէ 12 դրուշ:

Ֆուանսերէն Սորուիլ Ուզողներուն

Փաւսներէն լեզուն հիմնական կերպով, դիւրութեամբ եւ կարճ ժամանակի մէջ՝ առանց ուսուցչի՝ սորվիլ փափաքողներուն կը յանձնարարենք Կ. Ս. Տէմիրեան էֆէնտիի

Մ Ե Ն Տ Ո Ր Մ Ա Ն Կ Ա Ն Ց

Կ Ա Մ

ՖՐԱՆՍԵՐԷՆ - ԼԵՋՈՒԻ ԴԱՍԸՆԹԱՑԻՐ

Որ լոյս տեսաւ մեր տպարանէն մաքուր եւ խնամեալ տպագրութիւնով:

1. Մենսոր Մանկանց, Առաջին գիրք, Բերական եւ զրուցատրական վաժութիւններ, բոլորովին նոր մէթոտով, գին 2 շրշ:

2. Մենսոր Մանկանց, Երկրորդ գիրք, զրուցատրական վաժութիւններ, Ֆրանս. Ի Հայ եւ փոխադարձ թարգմանութիւններ, քերականական նախնական ծանոթութիւններ: Գին 4 շրշ:

3. Մենսոր Մանկանց, Երրորդ գիրք, հաւաքածոյ աշխարհագրական, թուարանական, իրագիտական, պատմական, կրօնական եւ բարոյագիտական խտացեալ եւ ճոխ դասերու, վայելչախօսական եւ քերականական ամէնէն դործածական կանոններով եւ հըրահանգներով սարքուած եւ համաձայն Ուսումն. Խորհուրդի կըրթական Ծրագրին: Մամլոյ տակ: Գին 6 շրշ:

Մեծ. Հեղինակին սոյն երկասիրութիւնները արգարեւ նորութիւն մըն են եւ բազմաթիւ Ուսուցիչներու կողմէ արժանապէս գնահատուած:

Յանձնարարութեան համար դիմել Պերպէրեան տպարան, Կ. Պոլի, Պապ Ալի ճատուէսի, թիւ 38. եւ Հեղինակին հասցէին՝ Կէտիկ փաշա, Մեսրոպեան վարժարան:

Հատր 30 փարայ